ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
22.02.2024 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
հասարակական կազմակերպության 2023 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
1.2 ՀՎՀՀ-ն		01545796
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԶԱՔՅԱՆ Փ. 3
1.4 Պետական գրանցման համարը		211.240.01678
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2003-04-02
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)43555772
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.e-notary.am
1.8 Էլեկտրոնային փոստը		notarakanpalat@mail.ru
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ԼԻԼԻԹ	ՄՈՒՐԱԴՅԱՆ	Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
1. կազմակերպում և համակարգում է Պալատի անդամների գործունեությունը՝ ուղղված քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների իրավունքների ապահովմանը և պաշտպանությանը.		
2. հսկողություն է իրականացնում նոտարի կողմից՝ իր գործունեության ընթացքում էթիկայի կանոնների, վարչության որոշումների կատարման և սույն կանոնադրությամբ սահմանված պահանջների պահպանման նկատմամբ.		
3. ներկայացնում և պաշտպանում է Պալատի անդամների իրավունքները և շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպությունների հետ հարաբերություններում, ինչպես նաև դատարանում.		
4. նոտարական գործողությունների պրակտիկայի միասնականության ապահովման նպատակով ամփոփում է նոտարների գործունեության արդյունքները, հրապարակում է նոտարական գործունեության վերաբերյալ մեթոդական և տեղեկատվական ուղեցույցային ձեռնարկներ, առաջարկում է ձևանմուշներ, ուղարկում է շրջաբերականներ		
5. կազմակերպում է նոտարների և նոտարների օգնականների ուսուցման և որակավորման բարձրացման գործընթացը, ինչպես նաև կարող է կազմակերպել նոտարների ստաժորների և նոտարական գրասենյակի աշխատակիցների ուսուցման և որակավորման բարձրացման դասընթացներ,		
5.1. նոտարների աշխատակազմը համալրելու նպատակով կարող է իրականացնել վճարովի ուսուցման դասընթացներ՝ նոտարների և/կամ ներգրավված այլ մասնագետների միջոցով,		
6. օրենքով նախատեսված դեպքում նոտարների նկատմամբ հարուցում է կարգապահական վարույթ, նոտարի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթով արդարադատության նախարարություն է ներկայացնում հաղորդում՝ իրեն ներկայացված նոտարական գործողությունների կամ նոտարի մատուցած այլ ծառայությունների բողոքների կամ դիմումների վերաբերյալ: Պալատը նոտարի նկատմամբ որպես կարգապահական տույժ կարող է կիրառել նախազգուշացում և նկատողություն.		
7. կազմակերպում է լիազորությունները դադարեցրած նոտարի փաստաթղթերի ընդունման և դրանք նոտարական պալատի արխիվի կամ այլ նոտարի՝ դրանց հանձնման գործընթացը և հնարավորության դեպքում ապահովում է լիազորությունները դադարեցրած նոտարի մասնակցությունը Պալատին արխիվի հանձնման գործընթացին, բացառությամբ «Նոտարիատի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ կետերի և 17-րդ հոդվածի 4-րդ մասի.		
8. ապահովում է նոտարների մասնակցությունը ՀՀ արդարադատության նախարարության կողմից անցկացվող նոտարների թեկնածուների որակավորման ստուգման գործընթացին.		
9. հարաբերություններ է հաստատում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և միջազգային կազմակերպությունների, քաղաքացիների միավորումների հետ.		
10. ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացնում նոտարների գործունեությանն առնչվող օրենքների կամ այլ իրավական ակտերի, ինչպես նաև դրանց փոփոխման ու լրացման վերաբերյալ առաջարկներ.		
11. օրենքով սահմանված դեպքերում և կարգով, Պալատի անդամների ժողովի որոշմամբ առևտրային կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց մասնակցելու միջոցով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն.		
12. օրենքով սահմանված դեպքերում և կարգով տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն.		
13. կազմակերպում է նոտարական արխիվային փաստաթղթերը համալրելու, հաշվառելու, պահպանելու և օգտագործելու հետ կապված աշխատանքները, ինչպես նաև այլ նոտարների՝ դրանց հանձնման գործընթացը.		
14. ՀՀ արդարադատության նախարարի սահմանած կարգով պահպանում է գործունեությունը կասեցված նոտարի կնիքը և ճզմիչ կնիքը.		

Digitally signed by MURADYAN GAYANE 5501600447
Date: 2024.05.29 10:18:38 AMT

15. կազմակերպում է էլեկտրոնային նոտարի համակարգի սպասարկման գործընթացը, նոտարներին ապահովում է էլեկտրոնային նոտարի համակարգ մուտք գործելու հնարավորությամբ, էլեկտրոնային նոտարի համակարգում առաջացած տեխնիկական խնդիրների և թույլ տրված վրիպակների դեպքում ցուցաբերում է տեխնիկական աջակցություն.

16. իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

4 Հասարակական կազմակերպության՝

4.1 Անդամների թիվը	116
4.2 Կամավորների թիվը	0
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը	3

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Նոտարների ամենամյա վերապատրաստման դասընթացների կազմակերպում	Ք.Երևան, Զաքյան -3	Նոտարների որակավորման բարձրացում	Ավարտված
2	Էլեկտրոնային նոտարի համակարգի սպասարկում և դրան ուղղված կատարելագործման ծրագրեր	ՀՀ,Երևան	Նոտարներին էլեկտրոնային համակարգի մուտքի ապահովում, ծրագրի սպասարկում կատարելագործում	Ավարտված
3	Համագործակցություն միջազգային կազմակերպությունների և այլ երկրների նոտարական պալատների հետ	ՀՀ, Մոսկվա, Մինսկ, Սամարա, Սանկտ Պետերբուրգ, Մամարդանդ	Անդամակցություն, Նոտարիատի փորձի ուսումնասիրություն, սեմինարների և կոնֆերասների կազմակերպում և մասնակցություն ՀՀ-ում և այլ երկրներում	Ավարտված
4	Նոտարական արխիվային փաստաթղթերի հաշվառում, պահպանում և այլ նոտարների դրանց հանձնման գործընթաց	ՀՀ, Ստեփանավան	Նոտարական փաստաթղթերի արխիվացումը հետագա օգտագործման համար	Ավարտված
5	Անշարժ գույքի կապիտալ վերանորոգում	ՀՀ, Փարաքար, մայրաքաղաքային փ, տարածք - 10,12	Արխիվի տարածքի կապիտալ վերանորոգում	Ընթացքի մեջ

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	Արդարադատության նախարարության կողմից ԳԲՊԿ համակարգի ներդրում	ՀՀ, Երևան	Ավարտված	Համակարգի ներդրում	Համակարգը գործում է

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	159,086,536
8.2 Գույքը	
Ընդամենը	159,086,536

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	18,000,000	Արդարադատության նախարարություն
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	18,000,000	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	93,876,507
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1	Ք.Երևան Մալաթիա-Սեբաստիա Ծիծեռնակաբերդի 1/2շ.298 տարածք	5,123,415
2	Ք.Երևան Մալաթիա-Սեբաստիա Ծիծեռնակաբերդի 1/2շ.թիվ 2 ավտոկայանատեղի	156,637
3	Փարաքար մայրաքաղաքային փ, տարածք - 10	63,447,312
4	Փարաքար մայրաքաղաքային փ, տարածք - 12	63,447,312
Ընդամենը		226,051,183

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	18,000,000
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		18,000,000

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	Վարձակալություն 68.20.1	6,824,776	Չի օգտագործվել
2	Նոտարների համար օգնականների դասընթացների կազմակերպում 85.59.5	1,840,000	Չի օգտագործվել
Ընդամենը		8,664,776	
Նշումներ			
Ավանդի % եկամուտ - 3414082 դրամ			

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____3_____ էջից
Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____
ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրություն, անունը, ազգանուն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ նոտարական պալատ հասարակական
կազմակերպության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել ՀՀ նոտարական պալատ հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) 2023 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընդգրկող ժամանակաշրջանի համար կազմված հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություն), հանրային միջոցների ֆինանսավորման մասով՝ հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունը՝ հանրային միջոցների ֆինանսավորման մասով, բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում Կազմակերպության 2023 թվականի տարեկան մուտքերի ընդհանուր գումարը և ստացման աղբյուրը, ինչպես նաև դրամական միջոցների և այլ գույքի օգտագործման, կանոնադրական նպատակներին ուղղված ծախսերը՝ համաձայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 27 մայիսի 2020 թվականի թիվ 477-Ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի և լրացման կարգի պահանջների:

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի»* (Մասնագիտական էթիկայի կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող մասնակգիտական էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում - Ֆինանսական հաշվետվության հիմունքը

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվության կազմման հիմունքին, այն է՝ Կազմակերպության ղեկավարությունը ֆինանսական հաշվետվությունը կազմել է՝ հիմնվելով «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 27 մայիսի

2020 թվականի թիվ 477-Ն հրամանով հաստատված հաշվետվության ձևաչափի, ներկայացման և հրապարակման կարգի պահանջների վրա: Ֆինանսական հաշվետվությունը պատրաստված է՝ օժանդակելու Կազմակերպությանը բավարարելու «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջը: Արդյունքում ֆինանսական հաշվետվությունը կիրառելի չէ այլ նպատակների համար: Մեր կարծիքը չի ձևափոխվում այս հարցի հետ կապված:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության համար

Ղեկավարությունը պատասխանատու է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվության պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունը պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը (եթե կիրառելի է), ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վրահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ է էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվությունն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվության հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Չեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվության ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվության հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Սույն անկախ աուդիտորի եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտորական առաջադրանքի պատասխանատու ղեկավարն է՝

Տնօրեն

Հայկ Մարգարյան

«Թրասթ Աուդիտ» ՓԲԸ

27 մայիսի 2024թ.

Առաջադրանքի պատասխանատու

Նելլի Սարգսյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 29.05.2024 10:16